ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

29 հոկտեմբեր, 2019 թվականի № 50-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ, 67-րդ ու 84-րդ հոդվածների, և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության պահանջները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ սույն որոշման № 1 Հավելվածում նշված արտադրատնտեսական գույքի շուկայական արժեքի որոշման նպատակով իրականացնել նշված գույքի գնահատում:
2. Գույքի շուկայական արժեքի սահմանման համար օգտվել անկախ գնահատողի ծառայություններից:
3. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա.ՇԻՐԻՆՅԱՆ

29 հոկտեմբերի, 2019 թվականի

ք. Երևան